Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵՁՈՒ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILINGUAL BULLETIN

1: Today's Scripture Reading, 21st December 2025 Bulletin 53/2025

Fifth Sunday of Advent

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 7:11-25

Ուրեմն, եթէ կատարելութիւնը Ղեւտացիներու քահանայութեամբ ըլլար, (քանի որ ժողովուրդը Օրէնքին տակ դրուեցաւ անոր ատենը,) ա՛լ ի՞նչ պէտք կար որ ուրի՛շ քահանայ մը ելլէր՝ Մելքիսեդեկի կարգին համեմատ, եւ չկոչուէր Ահարոնի կարգին համեմատ:

Արդարեւ՝ քահանայութեան փոփոխումով՝ հարկ էր որ փոփոխութիւն ըլլար նաեւ Օրէնքին: Եւ իրաւ եղաւ, որովհետեւ ա՛ն՝ որուն մասին կ'ըսուին այս բաները, կը պատկանէր ուրի՛շ տոհմի, որմէ ո՛չ մէկը մօտեցած էր զոհասեղանին. քանի որ յայտնի է թէ մեր Տէրը սերած է Յուդայի տոհմէն: Իսկ այդ տոհմին մասին Մովսէս ոչինչ ըսաւ՝ քահանայութեան վերաբերեալ: Ասիկա ա՛լ աւելի յայտնի է, քանի որ Մելքիսեդեկի նմանութեամբ ուրի՛շ քահանայ մը կ'ելլէ, որ եղած է ո՛չ թէ մարմնաւոր պատուէրի մը Օրէնքին համաձայն, հապա՝ անքակտելի կեանքի մը զօրութեան համեմատ:

Որովհետեւ կը վկայէ. «Դուն յաւիտեան քահանայ ես՝ Մելքիսեդեկի կարգին համեմատ»:

Արդարեւ նախկին պատուէրը կը ջնջուի իր տկարութեան ու անշահեկանութեան համար, որովհետեւ Օրէնքը ոչի՛նչ կատարեալ ըրաւ,) եւ անոր տեղ կը մտնէ լաւագոյն յոյս մը՝ որով կը մօտենանք Աստուծոյ: Եւ քանի որ ասիկա չեղաւ առանց երդումի, (որովհետեւ անոնք քահանայ եղած են առանց երդումի, իսկ ասիկա՝ երդումով, անո՛ր միջոցով՝ որ ըսաւ իրեն. «Տէրը երդում ըրեր է ու պիտի չզղջայ. "Դուն յաւիտեան քահանայ ես՝ Մելքիսեդեկի կարգին համեմատ"»,)

Յիսուս երաշխաւոր եղաւ լաւագոյն ուխտի մը:

Ի՛րապէս շատ եղած են քահանաները, քանի որ մահը կ'արգիլէր որ անոնք միշտ մնան: Բայց ասիկա ունի անփոփոխ քահանայութիւն, որովհետեւ յաւիտեան կը մնայ: Ուստի կարող ալ է կատարելապէս փրկել անոնք՝ որ իրմով կու գան Աստուծոյ. որովհետեւ ինք միշտ կ'ապրի՝ անոնց բարեխօս ըլլալու համար:

The Epistle of St Paul to the Hebrews 7:11-25;

Jesus Like Melchizedek

If perfection could have been attained through the Levitical priesthood—and indeed the law given to the people established that priesthood—why was there still need for another priest to come, one in the order of Melchizedek, not in the order of Aaron? For when the priesthood is changed, the law must be changed also. He of whom these things are said belonged to a different tribe, and no one from that tribe has ever served at the altar. For it is clear that our Lord descended from Judah, and in regard to that tribe Moses said nothing about priests. And what we have said is even more clear if another priest like Melchizedek appears, one who has become a priest not on the basis of a regulation as to his ancestry but on the basis of the power of an indestructible life. For it is declared:

"You are a priest forever, in the order of Melchizedek." a

Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

The former regulation is set aside because it was weak and useless (for the law made nothing perfect), and a better hope is introduced, by which we draw near to God.

And it was not without an oath! Others became priests without any oath, but he became a priest with an oath when God said to him:
"The Lord has sworn and will not change his mind: 'You are a priest forever.' " b

Because of this oath, Jesus has become the guarantor of a better covenant.
Now there have been many of those priests, since death prevented them from continuing in office; but because Jesus lives forever, he has a permanent priesthood. Therefore he is able to save completely c those who come to God through him, because he always lives to intercede for them.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 19:12-28

Ուրեմն ըսաւ. «Ազնուական մարդ մը գնաց հեռաւոր երկիր մը՝ իրեն թագաւորութիւն ստանալու եւ վերադառնալու: Իր տասը ծառաները կանչելով՝ տասը մնաս տուաւ անոնց, ու ըսաւ անոնց. "Շահարկեցէ՛ք՝ մինչեւ որ գամ":

Անոր քաղաքացիները կ'ատէին զայն, եւ պատուիրակութիւն մը ղրկեցին անոր ետեւէն՝ ըսելով. "Չենք ուզեր որ ասիկա թագաւորէ մեր վրայ":

Բայց երբ ան վերադարձաւ՝ թագաւորութիւնը ստանալով, իրեն կանչեց այն ծառաները՝ որոնց դրամ տուեր էր, որպէսզի գիտնայ թէ ո՛վ ի՛նչպէս շահագործած էր:

Առաջինը եկաւ եւ ըսաւ. "Տէ՛ր, քու մնասդ՝ տասը մնաս վաստկեցաւ": Ան ալ ըսաւ անոր. "Ապրի՛ս, բարի՛ ծառայ. որովհետեւ ամենափոքր բանին մէջ հաւատարիմ եղար, տա՛սը քաղաքի վրայ իշխանութիւն ունեցիր":

Երկրորդը եկաւ ու ըսաւ. "Տէ՛ր, քու մնասդ՝ հինգ մնաս բերաւ": Եւ ըսաւ անոր. "Դուն ալ հի՛նգ քաղաքի վրայ եղիր":

Ուրիշ մը եկաւ ու ըսաւ. "Տէ՛ր, ահա՛ քու մնասդ՝ որ կը պահէի թաշկինակի մը մէջ ծրարած, քանի որ կը վախնայի քեզմէ. որովհետեւ դուն խիստ մարդ մըն ես, կը վերցնես չդրած բանդ, եւ կը հնձես չսերմանածդ": Ան ալ ըսաւ անոր. "Բերանո՛վդ պիտի դատեմ քեզ, չա՛ր ծառայ: Գիտէիր թէ ես խիստ մարդ մըն եմ, կը վերցնեմ չդրած բանս ու կը հնձեմ չսերմանածս. ուրեմն ինչո՞ւ չտուիր իմ դրամս սեղանաւորներուն, որպէսզի եկած ատենս՝ տոկոսո՛վ պահանջէի զայն":

Քովը կայնողներուն ըսաւ. "Առէ՛ք ատկէ մնասը, եւ տուէ՛ք անոր՝ որ տասը մնաս ունի. (Ըսին իրեն. "Տէ՛ր, ան տա՛սը մնաս ունի".) որովհետեւ կը յայտարարեմ ձեզի թէ ամէն ունեցողի պիտի տրուի, ու չունեցողին՝ ունեցա՛ծն ալ պիտի առնուի իրմէ: Բայց այդ թշնամիներս, որոնք չէին ուզեր որ իրենց վրայ թագաւորեմ, բերէ՛ք հոս եւ մեռցուցէ՛ք իմ առջեւս"»:

Այս բաները խօսելէն ետք, յառաջ գնաց՝ որ բարձրանայ Երուսաղէմ:

The Holy Gospel of Jesus Christ according to Luke 19:12-28

He said: "A man of noble birth went to a distant country to have himself appointed king and then to return. So he called ten of his servants and gave them ten minas. a 'Put this money to work,' he said, 'until I come back.'

"But his subjects hated him and sent a delegation after him to say, 'We don't want this man to be our king.'

"He was made king, however, and returned home. Then he sent for the servants to whom he had given the money, in order to find out what they had gained with it.

"The first one came and said, 'Sir, your mina has earned ten more.'

" 'Well done, my good servant!' his master replied. 'Because you have been trustworthy in a very small matter, take charge of ten cities.'

"The second came and said, 'Sir, your mina has earned five more.' "His master answered, 'You take charge of five cities.'

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

"Then another servant came and said, 'Sir, here is your mina; I have kept it laid away in a piece of cloth. I was afraid of you, because you are a hard man. You take out what you did not put in and reap what you did not sow.'

"His master replied, 'I will judge you by your own words, you wicked servant! You knew, did you, that I am a hard man, taking out what I did not put in, and reaping what I did not sow? Why then didn't you put my money on deposit, so that when I came back, I could have collected it with interest?'

"Then he said to those standing by, 'Take his mina away from him and give it to the one who has ten minas.'

" 'Sir,' they said, 'he already has ten!'

"He replied, 'I tell you that to everyone who has, more will be given, but as for the one who has nothing, even what they have will be taken away. But those enemies of mine who did not want me to be king over them—bring them here and kill them in front of me.' "

Jesus Comes to Jerusalem as King

After Jesus had said this, he went on ahead, going up to Jerusalem.

Ս. Աբգար նախավկայի և Քրիստոսին հավատացող մեր անդրանիկ թագավորի հիշատակության օր

Աբգար հայոց արքան աստվածասեր և մեծահավատ էր՝ ըստ մարմնի թագավորակից Քրիստոսին, որովհետև Քրիստոս ծնվեց Ս. Կույս Մարիամից Աբգարի թագավորության առաջին տարում և 30 տարի հետո մկրտվեց Հորդանան գետում Հովհաննեսից:

Աբգարը, լսելով նրա մասին, անմիջապես հավատաց Նրան՝ թողնելով կռապաշտությունը: Եվ քանզի թագավորը հիվանդ էր բորոտությամբ, և չկար բժշկության հնար, Աբգարն ուղարկեց Անանեին՝ իր փառավոր նախարարին՝ ապահունիների իշխանին, նրա հետ 10 պատվավոր մարդկանց՝ մեծագին ընծաներով և նվերներով: Նաև գրեց Հիսուսին իր հավատի խոստովանության նամակը և աղաչեց գալ՝ բժշկել նրան չարաչար ցավից և լինել իր հետ: Անանեի հետ ուղարկեց Հովհաննես անունով մի նկարչի, որ եթե չկամենա Հիսուսը գալ արքայի մոտ, նկարեն Նրա պատկերը և բերեն իրեն:

Անանեն եկավ, հասավ Երուսաղեմ Ծաղկազարդի օրը, երբ Հիսուս իջավ Ձիթենյաց լեռի զառիվայրերով Գեթսեմանի, այնտեղից ելավ ավանակով Երուսաղեմ քաղաքը և գնաց մտավ Սողոմոնի տաճարը: Ելնելով տաճարից՝ Հիսուս գնաց Գամաղիէլ օրենուսույց վարդապետի տունը, ով Նիկոդեմոսի՝ Հիսուսի գաղտնի աշակերտի, եղբայրն էր, որովհետև Գամաղիէլը մեծարեց Հիսուսին և տարավ Նրան տաճարից իր տունը: Անանեն ուղարկեց պատվավոր յուրայիններին Հիսուսի աշակերտների մոտ՝ հարցնելու նրանցից, թե «ինչպե՞ս տեսնենք Քրիստոսին»: Ըստ Հովհաննես (Ավետարանչի), որ ասում է. «Կային այնտեղ ոմանք հեթանոսներից, որ եկան Երուսաղեմ և մոտեցան Փիլիպոսին ու ասացին. «Տե՛ր, կամենում ենք Հիսուսին տեսնել»: Փիլիպոս ասաց Անդրեասին: Անդրեասն ու Փիլիպոսը ասացին Հիսուսին և տարան նրանց Հիսուսի մոտ: Անանեն և յուրայինները տեսան Հիսուսին առաքյալների հետ Գամաղիէլի տանը: Հիսուս ընդունեց նրանց ուրախությամբ և ասաց. «Հասավ ժամը, որ փառավորվի մարդու Որդին»: Անանեն ոտքի կանգնեց, տվեց նամակը, երկրպագեց և Հիսուսին փոխանցեց արքայի ողջույնը: Հիսուս օրհնեց Աբգարին և նրա թագավորությունը, հրամայեց Թովմային նրան պատասխան գրել, երանի տվեց Աբգարին նրա հավատի համար և ասաց. «Փոքր-ինչ ժամանակ եմ աշխարհում, ապա կվերանամ երկինք՝ Իմ Հոր մոտ: Այնժամ կուղարկեմ քեզ մոտ Իմ աշակերտներից մեկին՝ կյանք տալու համար քեզ և ովքեր քեզ մոտ են»: Հիսուս օրհնեց նաև այն պատկերը, որ նկարել էր Աբգարի սուրհանդակը: Այն բերեցին և տվեցին Աբգարին՝ փոխանակ Տիրոջ: Տեսնելով այն՝ բարեպաշտ արքան ուժգին բերկրեց և համբուրեց ջերմեռանդ սիրով ու հաստատուն հավատով, որով այնժամ առողջացավ կես մարմնով: Աբգարը համարեց, թե տեսավ

Dear Parishioners and Armenian Community Members:

The Sunday collection plate circulating during Divine Liturgy is for all to contribute each Sunday in order to have a thriving church. Our Lord Jesus Christ told us in Matthew 17:24-27. Your donation, participation and support is vital, not only by attending the church but also with your time and financial contribution to our church. Please be generous and help to keep the doors of the St Yeghiche Armenian Church open and provide all the services.

Քրիստոսին մարմնով:
Քրիստոսի համբարձումից և Հոգեգալուստից հետո, զինված գեղարդով և Ս. Հոգով՝ Թադեոս առաքյալը եկավ Տուբա հրեայի տունը և բժշկեց նրան (որովհետև մահճին գամված էր իր հիվանդությամբ): Աբգարը, լսելով դրա մասին, ասաց, թե. «Սա նա է, որին խոստացավ ուղարկել ինձ Քրիստոս» և, ուղարկելով նրա ետևից, կանչեց իր մոտ Ս. առաքյալին: Երբ Թադեոսը մտավ Աբգարի մոտ, արքան, վեր կենալով իր գահից, երկրպագեց Թադեոսին և օրհնություն խնդրեց առաքյալից, քանզի սքանչելի նշան տեսավ նրա երեսին և ոսկե թագ Թադեոսի գլխին, ինչպես թագավորի մոտ: Թադեոսը, ձեռքը դնելով թագավորի գլխին, Քրիստոսի անվամբ փարատեց նրանից բորոտության ցավը: Ապա մկրտելով թագավորին՝ բոլորովին բժշկեց նրան չար հիվանդությունից: Նույնպես և բոլոր քաղաքացիները հավատացին Քրիստոսին և մկրտվեցին:
Առաքյալը կառուցեց եկեղեցիներ, ձեռնադրեց քահանաներ և պաշտոնյաներ: Ձեռնադրեց եպիսկոպոս Ադդե կերպասագործին՝ Քրիստոսի 70 աշակերտներից, և թողեց նրան իր փոխարեն քաղաքի առաջնորդ: Իսկ ինքը՝ առաքյալը, վերցնելով Աբգար արքայից հրովարտակներ, որպեսզի ամեն ոք հնազանդվի Քրիստոսի ավետարանին Թադեոսի քարոզությամբ, շարժվեց դեպի Վերին Հայք, Սանատրուկ արքայի մոտ, ով Աբգարի քրոջ որդին էր:
Աստվածասեր Աբգար թագավորը եղավ առաքելաբար Ավետարանի պատմողը. նշաններ և բժշկության հրաշքներ էր գործում: Գրեց նամակ Հռոմի կայսեր Տիբերիոսին, որպեսզի նա հրաման տա իր տերության բոլոր գավառներում պաշտել Աստծուն՝ Հիսուս Քրիստոսին՝ ծնված Բեթղեհեմում Ս. Կույս Մարիամից, ով անարգվեց Պիղատոսից և խաչվեց հրեաների կողմից: Նույն նամակը Աբգար թագավորը գրեց պարսից Արշավիր արքային՝ իր ազգականին և հանձնարարեց նրան ընդունել Սիմոն Կանանացուն, նույն ինքը Շմավոն նախանձահույզին՝ Հովսեփի որդուն և Հակոբոս Տեառնեղբոր եղբորը: Թագավորը նրան հանձնեց Արշավիր արքային, որպեսզի լսեն առաքյալի քարոզը: Բաբելացիների Ներսեհ մանուկ արքային նույնպես գրեց Աբգարը՝ հնազանդ լինել Ավետարանի քարոզին և պաշտել Քրիստոս Աստծուն: Եվ այնպես հոժարությամբ հոգ էր տանում բարեպաշտ Աբգարը՝ ամենուր Քրիստոսի արքայությունը քարոզելու համար, որպեսզի Քրիստոսի Ավետարանի քարոզը ընդդիմության չհանդիպի:
Քրիստոսին հավատացող հեթանոս թագավորներից առաջինը և բոլոր քրիստոնյա թագավորների անդրանիկը՝ բարեպաշտ Աբգար թագավորը, իր կյանքը և թագավորությունը այսպես կարգավորելուց հետո, առաքինի կյանքով ապրած և ալևորության հասած, հանգեց ի Քրիստոս և փոխադրվեց անանց թագավորություն դեկտեմբերի 31-ին:

Commemoration of St. Abgar, First Martyr of the Church and our first king believing in Christ

According to the tradition St. Abgar was the first Christian king of the 1st century, the son of the Parthian king Arshakunie Arsham. He was also called “senior man” as he was the wisest of all and of genius. Historian Moses of Khoronk, Assyrian historian Labubnia of Yedessia, Greek historians Procopis and Yeusebius have told about the king Abgar. He built the city of Yedessia in the site where the Armenian army protected the ford of the river Euphrates from the Roman captain Casius. Later the king moved the royal palace and all idols from Nisibis to that city.

It is during the period of reign of the king Abgar that Jesus Christ, the Savior of the world, was born. And Abgar, who was incurable, becoming aware of the wonders worked by Christ, believed in Christ and by means of his delegates sent a letter-petition to Jerusalem, to the Savior, asking Him to come and heal him. In the response letter it was said, that Christ still had important things to do in Jerusalem, but He should send one of His disciples to the king to heal him. After the Ascension of the Savior Apostle St. Thaddeus came to Yedessia, healed the king Abgar, the sick, preached the Gospel and appointed Adde, the silk-weaver, to be his successor. Jesus had sent his portrait to Abgar and it was kept for a long time in Yedessia, and later in the churches of various cities and towns.

After that the king Abgar sent letters to the king Tiberius and the king Nerseh of Assyria exhorting them to admit Jesus Christ as the Son of God and the Savior. The king Abgar passed away probably in the first half of the 1st century.

St Yeghiche Armenian Church Parish

Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Registered Charity No 1173403

St Yeghiche Armenian Church Parish Ltd, 13b Cranley Gardens, Kensington London SW7 3BB

t.+44 20 7373 8133 e. info@styeghiche.org.uk w. www.styeghiche.org.uk

New Year and Christmas at St Yeghiche Armenian Church
ՍԲ. ԵՂԻՇԷ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ
ՍԲ.ԾՆՆԴԵԱՆ
2026

Christmas Week / Սբ.Ծննդեան պահք՝ դեկտ. 30-ից հունուար 5

Sunday 21st December 2025 — 11:00 Divine Liturgy / Սբ. Պատարագ

Sunday 28th December 2025 — 11.:00 Divine Liturgy / Սբ. Պատարագ

New Year / Նոր Տարի

Thursday 1st January 2026 — 11:00 Divine Liturgy and blessing of Pomegranates./Սբ. Պատարագ եւ Նռնօրհնէք

New Sunday/Նոր Կիրակի

Sunday 4th January 2026 — 11:00 Divine Liturgy / Սբ. Պատարագ

Jerakaloutz/ Ճրագալոյց, Christmas Eve Prayers

Monday 5th January 2026 — No Morning Service
15:00 Scripture readings / Ճաշու ընթերցումներ
16:30 Christmas Eve Eucharist and Holy Communion / Սբ. Ծննդեան Ճրագալոյցի Սբ. Պատարագ
18:30 Blessing of home / Տնօրհնէք

Theophany and Epiphany/ ՍԲ ԾՆՈՒՆԴ Ե ԱՍՏՈՒԱԾՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

Tuesday 6th January 2026 — 11:00 Episcopal Divine Liturgy followed by Blessing of the Water
/Առաջնորդական Սբ. Պատարագ, Ջրօրհնէք
(Պատարագիչ՝ Գերշ.տ. Յովակիմ եպս Մանուկեան)

Blessing of the Graves

Wednesday 7th January 2026 — 11:00 – 2:00 Rev Fr Nshan will be available at Gunners bury Cemetery to conduct individual prayers.
If you require at any other cemetery, please contact us to arrange with the Clergy Visiting the Cemetery.

All faithful are invited and encouraged to join us with their prayers.
For enquiries please contact any member of the St Yeghiche Armenian Church Parish Council, manning the desk at the church entrance or visit www.styeghiche.org.uk

May the Joy and Peace of Christmas
be with you now
and throughout the coming year.

Thank you

St Yeghiche Armenian Church Parish Council, would like to thank each and every member of St Yeghiche Choir and Guest Singers for last Sunday's fabulous performance at 2025 Christmas Carol Evening under the leadership of Maestro Aris Nadirian and accompanied by Organist Mr Razmig Melkonian.

The Concert was well attended by Representatives of various Religious and Armenian organisations and members of the Armenian Community.

HG Bishop Hovakim Manukyan in his closing speech reminded us of the gift we received from our Lord and its significance in our life.

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն

«Ես եմ Տէրն առաջին, նոյնն եմ լինելու եւ յաւիտեան» (Ես. 41:4):

Ակնյայտ է, որ Նրանից առաջ չի եղել ոչ ոք եւ Նրանից յետոյ եւս ոչ ոք չի լինելու: Այսինքն՝ Նա սկիզբ չունի եւ յաւիտեան է, սա յատուկ է միան անմահ յաւիտենութեանը» (սբ. Յովհան Ոսկեբերան)

Աստուածասէ՛ր եղբայրներ եւ քոյրեր,

Անհնար է հոգեւոր խոկում չունենալ տարեվերջին: Ամէն օր է Աւետարանը մեզ յորդորում ինքնաքննութեան հաշուետու աղօթք ունենալ, որ արեգակը մեր բարկութեան կամ անարդար կեցուածքի վրայ մայր մտած չլինի, ամէն օր մարդկանց եւ Աստծոյ հետ հաշտուած գլուխը բարձին դրած լինենք:

Երեւոյթներ կան, որ ամէն օր են փոփոխւում՝ սկսած եղանակից մինչեւ մարդկանց գործ եւ տրամադրութիւն: Ոչ միայն մեզ շրջապատող ամէն բան է անցողիկ, այլեւ մենք իսկ՝ մեզ տիեզերքի կենտրոն կարծող մարդիկս էլ ենք անցողիկ, ինչպէս հնում էին ասում՝ անցաւոր: Շատերը կը յիշեն.

«Հե՛յ ազահ մարդ, հե՛յ անգոհ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ, Քանի՛ քանիսն անցան քեզ պէս, քեզնից առաջ, քո առաջ. Ի՛նչ են տարել նրանք կյանքից, թէ ինչ տանես դու քեզ հետ, Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրուան էս ճամփեդ» (Յովհ. Թումանեան):

Հաւատքի աչքերով նայող բանական ամէն մարդ գիտի, որ ոչ միայն ինքը, այլեւ ամբողջ աշխարհն է անցողիկ: Ինչպէս Քրիստոս է ասում. «Երկինքն ու երկիր կանցնեն…»՝ ցոյց տալով մեզ համար անխախտ թուացող երկնքի եւ երկրի ոչ յաւիտենական լինելը: Մեր անխուսափելի կորուստների շարքի մէջ մենք յաճախ տագնապի, խուճապի հոգեվիճակի մէջ ենք յայտնւում, ինչպէս հանրային մեծ հուզումների, ճգնաժամների, մեծ աւերների կամ պատերազմների ժամանակ է լինում: Ուզում ենք հենուել չփոփոխուող, հաստատուն զօրութեան վրայ: Ծնողները, սիրելի ու հարազատ մարդիկ, իրենց ամբողջ սիրով եւ մեզ հետ լինելու ցանկութեամբ, աւաղ, ուշ թէ շուտ երկրից երկինք ճամփան են բռնում: Ժամանակի մէջ հաստատուն է Նա, որ վեր է ժամանակից, Որի միջոցով մեր ժամանակն է արժեւորւում՝ Աստուած.

«Նա է, որ փոփոխում է ժամերն ու ժամանակները:
Թագաւորներ է կարգում եւ փոփոխում,
իմաստուններին իմաստութիւն է տալիս
եւ խելամիտներին՝ իմացութիւն,
բացայայտում է խորին եւ ծածուկ բաները» (Դան. 3:21):

Այս օրերին, անձնային, ընտանեկան եւ համազգային լուրջ քննութեան եւ հաշուետուութեան խոկումների մէջ, մենք կարիքն ունենաք Աստծոյ հետ լուրջ զրոյցի: Հաշուետու լինելը դժուար է, մանաւանդ Աստծոյ առաջ, բայց՝ անհրաժեշտ եւ օգտակար: Մեր անձնային եւ համայնական անկումներից հնարաւոր է արագ ոտքի ելնել, վերականգնուել խղճի եւ Աստծոյ առաջ ազնիւ հաշուետութիւնից յետոյ միայն: Աստծոյ հետ մարդկութեան անցած պատմութիւնը լեցուն է անձնային եւ համայնական վերածնունդի, վերափոխումի օրինակներով: Միայն հոգեւոր այս բանաձեւն է իսկապէս գործուն: Համազգային, համահայկական վերադարձի, հոգեւոր ինքնամաքրումի եւ վերականգնման շրջանի վերածենք այս եկող տարին. Քրիստոս է ճանապարհը, այլ զարտուղի կածաններով բաւ է դեգերենք. «Յիսուս Քրիստոս նոյնն է երէկ, այսօր եւ յաւիտեան» (Եբր 13:8): Չկան այլ տէրեր ու փրկիչներ: Աստուած չի փոխուել, թող Իր նկատմամբ մեր սէրն էլ խորանայ, լրջանայ, լցնի եւ մաքրի մեր կենցաղը:

«Ես եմ Տէրն առաջին, նոյնն եմ լինելու եւ յաւիտեան»:

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

DAILY BIBLE READINGS FOR 2025 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

22 December	Sts. Abraham and Khoren, and the Unmercenary Physicians Sts. Cosmas and Damian, and Asdvadzadoor the Martyr Wisdom 5:16-18; Lamentations 3:22-56; 2 Timothy 3:10-15; Luke 12:32-40
23 December	St. David the Prophet and Holy Apostle James 2 Samuel 5:1-10; 1 Kings 2:1-11; Ezekiel 34:20-27; James 1:1-12; Matthew 22:41-46
24 December	Hebrews 5:11-6:8; Luke 18:18-27
25 December	St. Stephen the Proto-Deacon and the First Martyr Acts 6:8-8:2; John 12:24-26
26 December	Hebrews 6:9-7:10; Luke 19:1-10
27 December	The Holy Apostles Peter and Paul Wisdom 9:13-10:2; Isaiah 28:16-19; 2 Peter 1:12-19; 2 Timothy 4:1-8; John 21:15-22

Registered Charity No. 117340

Dear Parishioners
and
Armenian Community Members

St Yeghiche Armenian Church, has published its 2026 wall calendar, with both Armenian Religious Feast dates and U.K. holiday dates.

These are out for sale at St Yeghiche Armenian Church, from this Sunday 30th November, 2025 and till stock lasts.

We encourage every Armenian household to have one, and bring our Lords blessing to your home and family.

Thank you for your support
St Yeghiche Armenian Church Parish Council

Announcement

Organist / Keyboard Player Required

St Yeghiche Armenian Church Parish is looking to engage an enthusiastic Organist / Keyboard player to assist and enhance our Sunday Divine Liturgy and its glorification of our Lord.

The position entails playing on Sunday's Divine Liturgy, and other religious events throughout the Year.

Fees by negotiation – Immediate start

If interested please contact
Choirmaster Mr Aris Nadirian or
Parish Council Chairman Mr Viken Haladjian
by calling 020 73738133 or by emailing to
info@styeghiche.org.uk

The Church organ is the second largest in the country, lavishly carved and decorated with prefigures of Gothic architecture. It is noteworthy that Sir Arthur Seymour Sullivan, illustrious English composer was the first organist at St Yeghiche Armenian Church (previously known as St. Peter's Church) who played the first version of the existing organ from 1867 to 1871. .

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

- By Louise, Nayiri and Laura Dadourian and their families for the souls of their Husband who was also a loving Father and Grandfather the late **ASADOUR DADOURIAN** on the 40th day memorial service of his passing, also for all the old and new deceased members of the **DADOURIAN** Family.

- By Rand/Hayek family for the soul of their beloved Mother who was also a loving Grandmother the late **ANAHID NAKASHIAN** on her 5th anniversary of passing, also for all the old and new deceased members of **HAYEK** and **NAKASHIAN** Families.

- By St Yeghiche Armenian Church Deacons for the soul of their past Deacon Brothers the late Archdeacons **HAGOP KEOSHKERIAN**, **VARTGES KESHISHIAN**, **SOUREN KHEDRIAN** and **DERTAD SHAMILIAN** in Commemoration of St. Stephen the Protomartyr and the first martyr.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

General

St Yeghiche Armenian Church is here to cater for all of your spiritual needs

Baptisms, Weddings, Baby Blessings, Home/Workplace Blessings, Seniors' Visitation, Hospitals/Home Visitation/Prayer, Funeral Service, Requiem, Grave Site Prayers, and more..

Please contact members of the Parish Council at Church every Sunday to request any of the above services. Alternatively, call Tel: 020 73738133 office, or write to Email: serices@styeghiche.org.uk

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan on 07548 777 147.

Hokehankist Requests: To request a requiem service and include details in our Sunday Bulletin, please contact us ***before Thursday Evening.*** Please contact Mr Viken Haladjian, or approach a member of Parish Council at church every Sunday after Badarak.
Tel: 020 7373 8133 office, 07970 146 280 mobile Email: services@styeghiche.org.uk

In Liu of Flowers: Friends and family of the deceased can make donations, in memory of their loved ones, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund.

Donations for prayers and annual membership contributions, in support of church's annual expenses, are welcome. Donations can be made;
-By a cheque made payable to "St Yeghiche Armenian Church Parish",
-By electronic bank transfer to "St Yeghiche Armenian Church Parish Ltd"
HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26
-By electronic card reader at the Church entrance.
-By QR Code directly to the Church PayPal or SumUp accounts.

PayPal
Scan. Pay. Go.

Scan to Pay

St Yeghiche Armenian Church is a UK Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.

Membership: St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk